ԳԼՈՒԽ ՃՂԸ.

Ամենայն իր վաճառեալ 'ի յումեքէ եթէ գնողն կիսագին լինի գնեալ, եթէ գուցէ իրն այն լինի գողացեալ և երևեսցէ տէր իրին այնմիկ ազատապէս ստասցէ իրն իւր առանց հատուցման։

ԳԼՈՒԽ ՃՂԹ.

Դստերք հայոց տի հասակի ամուսնութեան իւրեանց յետ չորեքտասան ամաց, և ուստերք յետ եօթն և տասն ամաց, յառաջ քան զայն ժամանակ արգելեալ իցէ։

ԳԼՈՒԽ Մ.

Ամենայն պատիժ 'ի վերայ քրէական մեղաւորաց կատարեսցի 'ի վերայ մեղաւորին, թէ մեղաւորն գուցէ տի հասակի իւրոյ աւելի քան թէ ութնևտասն ամաց, եթէ պակաս, խրատելով արձակեսցի իբր մանուկ։

ԳԼՈՒԽ ՄԱ.

Մի արժեսցի թուղթ ձեռնադրեալ 'ի վերայ որում բանի որ իցէ, մինչ ձեռնադրողն չիցէ լցեալ տի հասակի իւրոյ ութն և տասն ամաց։